ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Աստված մեր բարյաց պարգևատու, մեզ վերստին կարժանացնե ողջունելու Նոր տարվան արշալույսը, Իր միածին Որդվույն Սուրբ Ծննդյան ավետիսով:

Ավետիս մեծ և աքանչելի, բոլոր ազգերու և բոլոր ժամանակներու համար, զի ծնավ Փրկիչը մեր Քրիստոս, ցույց տալու համար համայն մարդկության՝ ճանապարհը հավիտենական կյանքին երկնքի արքայության մեջ ու ճանապարհը մարդոց խաղաղ համակեցության և փոխադարձ հաճության երկրի վրա:

Մեր օրերու աշխարհի խռովահույզ կացությանց առաջ կանգնած, մենք քրիստոնյաներս, զրահված մեր հավատքի լույսով և Սուրբ Ծննդյան երկնային պատգամով, պարտինք անձանձրույթ աղոթել ու գործել, որ երկրի վրա տևապես թագավորեն փոխադարձ բարի կամեցողությունը և խաղաղ գործակցությունը մարդոց և ազգություններու միջև:

Մեր հորդորն է նաև ուղղյալ մեր Մայր Եկեղեցիին ու համայն մեր հավատացյալներուն, որ ապրին և գործեն սիրով միաբան, մեկը մյուսին հնազանդ՝ երկյուղովը Քրիստոսի:

«Զի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զերկոսեան մի և զմիջնորմն ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւն ի մարմնի իւրում» և «եկն առետարանեաց խաղաղութիւն ձեզ, հեռաւորաց և խաղաղութիւն մերձաւորաց» (Եփես. Բ 14—17):

Մեր սիրտը լեցուն Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդյան ուրախությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն ձեզի բոլորիդ կրնենք Աստուծո օրհնությունը և Մեր հայրական սերն ու ամենաբարի մաղթանքները բոլորիդ հոգեշեն առաքելության լիակատար հաջողության համար:

Ձեզի մեծ ավետիս՝ «Քրիստոս ծնաւ ի յայտնեցաւ»:

«Շնորհք հրաշալի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ». ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: